տեսքերուն համեմատ չգտայ. զի հարաւոյ բարկ արևուն ճառագայթներէն զուրկ լինելով, ոչ Ղրիմու պտղոց քաղցրութիւնը ունին և ոչ հոտը։ Հանդիպած գեղերուս մէջ մանաւոր յիշատակելու արժանի է Թիննա կոչուածն, ուստի 40 վերստ է Կամենից, փառաւոր է գիւղիս եկեղեցին, և համբաւաւոր 'ի Փոտոլիա՝ հրաշագործ պատկերաւ Տիրամօր։ Եկեղեցւոյն մեծապատիւ կանոնիկոս ժողովրդապետն Լրսեցքի, զրիմեցւոյ համար հետաքրքրական դէպքի կարդաց եկեղեցւոյն տարեգրութեան մէջ. զոր կ'արժէ հոս յիշատակել։ Այսկէ 100 տարի առաջ՝ ժամանակին ժողովրդապետն զրած է, որ Ղրիմու վերջին Թաթարաց Շահան–Գերէհ խանն, Ռուսաց թերակղզւոյս տիրելէն վերջը, Մոսկուա գնալու ժամանակ ինկեանած է այս Թիննա գիւղիս մէջ, եկեղեցւոյս աւագ երէցն հիւրընկալելով զնա՝ ճաշ մի տուած է, առաջնորդարանին ետև մեծամեծ կակղի ծառոց ստուերին ներքև. դարևոր կակղիք դեռ ևս կանգուն, մեղմ հովիկին շնչելով, ներդաշնակ խոշիւն մի կը հանէին, իբր թէ հաստատելով կանոնիկոսին կարդացածը. Շահան – Գերեհի համար այսպէս կը գրէր տարեգիրն. « Շատ կարգաւորեալ մարդ էր, լատին և իտալացի լեզուները համարձակ կը խօսէր »։

Պատուական կանոնիկոսն չթողուց՝ որ առանց իրեն մօտ ճաշելու՝ առաջ երթամ. երբ ասացի թէ՝ Մութին կը մնամ. — Աւելի լաւ կը լինի, ասաց, զի ճրագի լուսով Կամենից « առաւել չքեղ կ'երևնայ, քան ցորեկ ատեն »։ Երեք ժամ մնացի գիւղիս մէջ, այլ գոհ եմ մեծապէս, զի պատկառելի երիցուն կենցաղավարութիւնն ինձ մեծապէս շինութեան պատճառ եղաւ։ Քանի՞ քաղցր